ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ՄԱԾՁԲ-23-2

ք. Երևան 26 .04.2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից և «ՌԱԴԱՐ-ԱՎԻԱ» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Գ. Ղազարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող № 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի № 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված (5) հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 79 396 000 /յոթանասունինը միլիոն երեք հարյուր իննսունվեց հազար/ ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի № 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Սույն Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման

ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է՝ 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Սույն պայմանագրի № 1, 2, 3 և 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ Ավիացիայի վարչությունը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

"ՌԱԴԱՐ-ԱՎԻԱ» ՓԲԸ
ՀՀ, ք. Էջմիածին, Տեր Գաբրիելյան 22
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220213330370100
ՀՎՀՀ 04715288
Գլխավոր տնօրեն

Ա. ԽԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 1
ՄԱԾՁԲ-23-2 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	Անվանումը	Չափի միավոր	Տեխնիկական պայմանները
	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ, այդ թվում		
1.	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Զիլ-131 ավտոմեքենայի թափքի վրա տեղադրված ԱՊԱ-80 սարքավորումների վերականգնողական նորոգում)	հատ	Ավիացիոն հատուկ վերգետնյա կապի և ռադիոտեխնիկական միջոցների տեխնիկական նկարագրերին և վերանորոգման տեխնիկական փաստաթղթերին համապատասխան
2.	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (ՍԿՊ -11(ստացիոնար) եռամյակայն տեխնիկական սպասարկում)	հատ	
3.	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Ռ – 849 ռ/կ տարեկան տեխնիկական սպասարկում)	հատ	
4.	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Ռ - 845 ռ/կ տարեկան տեխնիկական սպասարկում)	հատ	
5.	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Ռ - 845 ստացիոնար ռ/կ կիսամյակային տեխնիկական սպասարկում)	հատ	
6.	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (ԱՌՊ -11 կիսամյակային տեխնիկական սպասարկում)	հատ	
7.	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Ռ/Կ ՊԱՌ-10 «ԲՊՌՄ» եռամսյակային տեխնիկական սպասարկում)	հատ	
8.	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Ռ/Կ ՊԱՌ-10 «ԴՊՌՄ» եռամսյակային տեխնիկական սպասարկում)	հատ	
9.	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Ռ/Կ ԱՊՌ-7 կիսամյակային տեխնիկական սպասարկում)	հատ	
10.	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (ԱՌՊ -80 եռամյակային տեխնիկական սպասարկում)	հատ	
11.	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Տեղանիշ ՌՓ Ε-615 «ԲՊՌՄ», «ԴՊՌՄ» եռամսյակային տեխնիկական սպասարկում)	հատ	
12.	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (ՍԿՊ-11 տարեկան տեխնիկական սպասարկում)	հատ	
13.	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (ՌՌ/Կ Ռ-415 կիսամյակային տեխնիկան սպասարկում)	հատ	
14.	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Ռ/Կ ՊԱՌ -10 «ՕՊՌՍ» եռամսյակային տեխնիկական սպասարկում)	հատ	
15.	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Դիսպետչերական կառավարման վահանակ եռամսյակային տեխնիկական սպասարկում)	հատ	
16.	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Ռ/կ Բակլան-20 կիսամյակային տեխնիկական սպասարկում)	հատ	
17.	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Շարժական ռ/կ ՊԱՌ-10 ռադիոփարոսի տարեկան տեխնիկական սպասարկում)	հատ	
18.	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Ռ/կ Բակլան-5 կիսամյակային տեխնիկական սպասարկում)	հատ	
19.	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Ռ/կ Պոլյոտ-1 տարեկան տեխնիկական սպասարկում)	հատ	
20.	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Ռ/կ Պոլյոտ-2 կիսամյակային տեխնիկական սպասարկում)	հատ	
21.	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Ռադիոընդունիչ Ռ-872 տարեկան տեխնիկական սպասարկում)	հատ	
22.	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Ռադիոպելենգատոր ԱՌՊ-7 կիսամյակային սպասարկում)	հատ	
23.	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Հրամանատարաշտաբային մեքենաների կիսամյակային տեխնիկական սպասարկում)	հատ	
24.	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Շարժական հրամանատարական կետի տարեկան տեխնիկական սպասարկում)	հատ	

25	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (ԱՊՊ-90 լուսատեխնիկական ապահովման համակարգի տարեկան տեխնիկական սպասարկում)	հատ	Ավիացիոն հատուկ վերգետնյա կապի և ռադիոտեխնիկական միջոցների տեխնիկական նկարագրերին և վերանորոգման տեխնիկական փաստաթղթերին համապատասխան
26.	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Կարճաթը «Կաշտան» ռադիոկայանի տարեկան տեխնիկական սպասարկում)	հատ	
27.	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Հրամանատարադիսպետչերական կետի վահանակի ապամոնտաժում, միջին վերանորոգում, տեղադրում և կարգավորում)	հատ	
28.	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (ՊԱՌ-10 բերման փարոսի վերանորոգում, Արցախի Հանրապետության Վաղուհաս գյուղում տեղադրում և կարգավորում)	հատ	
29.	Ինքնաթիռների պահպանման ծառայություններ («Պոլյուս-2» ռ/կ միջին վերանորոգում, տեղադրում և կարգավորում)	հատ	

Ծանոթություն.

- Ծառայությունները պետք է իրականացվեն ՀՀ ՋՈՒ ավիացիայի վարչության կողմից նշված փաստացի վայրում:
- Ծառայությունը կատարողի կողմից պետք է իրականացվի իր տեխնիկական միջոցներով և անձնակազմով:
- Վերանորոգված սարքավորումների շահագործման երաշխիքային ժամկետը 365 օր, ընդունման օրվանից:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

ՀՀ	Անվանումը	Չափի միավոր	Քանակը	Ծառայությունների մատուցումն ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ.				Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/
				I	II	III	IV		
1	Զիլ-131 ավտոմեքենայի թափքի վրա տեղադրված ԱՊԱ-80 սարքավորումների վերականգնողական նորոգում	հատ	1		1			10,000,000	10,000,000
2	ՍԿՊ -11 (ստացիոնար) եռամսյակային տեխնիկական սպասարկում	հատ	4		2	1	1	580,000	2,320,000
3	Ռ – 849 ռ/կ տարեկան տեխնիկական սպասարկում	հատ	3		3			708,000	2,124,000
4	Ռ – 845 ռ/կ տարեկան տեխնիկական սպասարկում	հատ	3		2	1		726,000	2,178,000
5	Ռ – 845 (ստացիոնար) ռ/կ կիսամյակային տեխնիկական սպասարկում	հատ	6		3	3		726,000	4,356,000
6	ԱՌՊ –11 կիսամյակային տեխնիկական սպասարկում	հատ	4		2	2		243,000	972,000
7	Ռ/Կ ՊԱՌ–10 «ԲՊՌՄ» եռամսյակային տեխնիկական սպասարկում	հատ	4		2	1	1	575,000	2,300,000
8	Ռ/Կ ՊԱՌ–10 «ԴՊՌՄ» եռամսյակային տեխնիկական սպասարկում	հատ	8		4	2	2	575,000	4,600,000
9	Ռ/Կ ԱՊՌ–7 կիսամյակային տեխնիկական սպասարկում	հատ	2		1	1		349,000	698,000
10	ԱՌՊ –80 եռամսյակային տեխնիկական սպասարկում	հատ	4		2	1	1	581,000	2,324,000
11	Տեղանիշ ՌՓ Ե–615 «ԲՊՌՄ», «ԴՊՌՄ» եռամսյակային տեխնիկական սպասարկում	հատ	8		4	2	2	358,000	2,864,000
12	ՍԿՊ -11 տարեկան տեխնիկական սպասարկում	հատ	2		1	1		580,000	1,160,000
13	ՌՌ/Կ Ռ-415 կիսամյակային տեխնիկական սպասարկում	հատ	8		4		4	349,000	2,792,000

14	Ռ/կ ՊԱՌ 10 «ՕՊՊԱՍ» եռամյակային տեխնիկական սպասարկում	հատ	16		8	4	4	575,000	9,200,000
15	Դիսպետչերական կառավարման վահանակ եռամյակային տեխնիկական սպասարկում	հատ	8		4	2	2	580,000	4,640,000
16	Ռ/կ Բակլան-20 կիսամյակային տեխնիկական սպասարկում	հատ	4		2	2		72,000	288,000
17	Շարժական ռ/կ ՊԱՌ-10 ռադիոփարոսի տարեկան տեխնիկական սպասարկում	հատ	3		2	1		572,000	1,716,000
18	Ռ/կ Բակլան-5 կիսամյակային տեխնիկական սպասարկում	հատ	10		5		5	72,000	720,000
19	Ռ/կ Պոլյոտ-1 տարեկան տեխնիկական սպասարկում	հատ	2		1		1	67,000	134,000
20	Ռ/կ Պոլյոտ-2 կիսամյակային տեխնիկական սպասարկում	հատ	6		3		3	312,000	1,872,000
21	Ռադիոընդունիչ Ռ-872 տարեկան տեխնիկական սպասարկում	հատ	5		3	1	1	43,000	215,000
22	Ռադիոպելենգատոր ԱՌՊ-7 կիսամյակային սպասարկում	հատ	4		2		2	262,000	1,048,000
23	Հրամանատարաշտաբային մեքենաների կիսամյակային տեխնիկան սպասարկում	հատ	8		4	4		310,000	2,480,000
24	Շարժական հրամանատարական կետի տարեկան տեխնիկական սպասարկում	հատ	1		1			485,000	485,000
25	ԱՊՊ-90 լուսատեխնիկական ապահովման համակարգի տարեկան տեխնիկական սպասարկում	հատ	3		2	1		290,000	870,000
26	Կարճալիք «Կաշտան» ռադիոկայանի տարեկան տեխնիկական սպասարկում	հատ	2		2			372,500	745,000
27	Հրամանատարադիսպետչերական կետի վահանակի ապամոնտաժում, միջին վերանորոգում, տեղադրում և կարգավորում	հատ	1				1	5,650,000	5,650,000
28	ՊԱՌ-10 բերման փարոսի վերանորոգում, Արցախի Հանրապետության Վաղրհաս գյուղում տեղադրում և կարգավորում	հատ	1			1		7,955,000	7,955,000
29	Պոլյոտ-2 ռ/կ միջին վերանորոգում, տեղադրում և կարգավորում	հատ	1			1		2,690,000	2,690,000
	ԸՆԴԱՄԵՆԸ՝								**79,396,000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

"ՌԱԴԱՐ-ԱՎԻԱ» ՓԲԸ
Տնօրեն

Գ. ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 2
ՄԱԾՁԲ-23-2 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ., ըստ համապատասխան ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ.								
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	ԶիլՀ-131 ավտոմեքենայի թափքի վրա տեղադրված ԱՊԱ-80 սարքավորումների վերականգնողական նորոգում	50211100/1	10 000 000	10 000 000	10 000 000	10 000 000	10 000 000	10 000 000	10 000 000	10 000 000	10 000 000
2	ՍԿՊ -11 (ստացիոնար) եռամսյակային տեխնիկական սպասարկում	50211100/2	1 160 000	1 160 000	1 160 000	1 740 000	1 740 000	1 740 000	2 320 000	2 320 000	2 320 000
3	Ռ – 849 ռ/կ տարեկան տեխնիկական սպասարկում	50211100/3	2 124 000	2 124 000	2 124 000	2 124 000	2 124 000	2 124 000	2 124 000	2 124 000	2 124 000
4	Ռ – 845 ռ/կ տարեկան տեխնիկական սպասարկում	50211100/4	1 452 000	1 452 000	1 452 000	2 178 000	2 178 000	2 178 000	2 178 000	2 178 000	2 178 000
5	Ռ – 845 (ստացիոնար) ռ/կ կիսամյակային տեխնիկական սպասարկում	50211100/5	2 178 000	2 178 000	2 178 000	4 356 000	4 356 000	4 356 000	4 356 000	4 356 000	4 356 000
6	ԱՌՊ –11 կիսամյակային տեխնիկական սպասարկում	50211100/6	486 000	486 000	486 000	972 000	972 000	972 000	972 000	972 000	972 000
7	Ռ/Կ ՊԱՌ–10 «ԲՊՌՄ» եռամսյակային տեխնիկական սպասարկում	50211100/7	1 150 000	1 150 000	1 150 000	1 725 000	1 725 000	1 725 000	2 300 000	2 300 000	2 300 000
8	Ռ/Կ ՊԱՌ–10 «ԴՊՌՄ» եռամսյակային տեխնիկական սպասարկում	50211100/8	2 300 000	2 300 000	2 300 000	3 450 000	3 450 000	3 450 000	4 600 000	4 600 000	4 600 000
9	Ռ/Կ ԱՊՌ–7 կիսամյակային տեխնիկական սպասարկում	50211100/9	349 000	349 000	349 000	698 000	698 000	698 000	698 000	698 000	698 000
10	ԱՌՊ –80 եռամսյակային տեխնիկական սպասարկում	50211100/10	1 162 000	1 162 000	1 162 000	1 743 000	1 743 000	1 743 000	2 324 000	2 324 000	2 324 000
11	Տեղանիշ ՌՓ Է–615 «ԲՊՌՄ», «ԴՊՌՄ» եռամսյակային տեխնիկական սպասարկում	50211100/11	1 432 000	1 432 000	1 432 000	2 148 000	2 148 000	2 148 000	2 864 000	2 864 000	2 864 000
12	ՍԿՊ -11 տարեկան տեխնիկական սպասարկում	50211100/12	580 000	580 000	580 000	1 160 000	1 160 000	1 160 000	1 160 000	1 160 000	1 160 000
13	ՌՌ/Կ Ռ-415 կիսամյակային տեխնիկական սպասարկում	50211100/13	1 396 000	1 396 000	1 396 000	1 396 000	1 396 000	1 396 000	2 792 000	2 792 000	2 792 000
14	Ռ/Կ ՊԱՌ -10 «ՕՊՌՍ» եռամսյակային տեխնիկական սպասարկում	50211100/14	4 600 000	4 600 000	4 600 000	6 900 000	6 900 000	6 900 000	9 200 000	9 200 000	9 200 000
15	Դիսպետչերական կառավարման վահանակ եռամսյակային տեխնիկական սպասարկում	50211100/15	2 320 000	2 320 000	2 320 000	3 480 000	3 480 000	3 480 000	4 640 000	4 640 000	4 640 000
16	Ռ/Կ Բակլան-20 կիսամյակային տեխնիկական սպասարկում	50211100/16	144 000	144 000	144 000	288 000	288 000	288 000	288 000	288 000	288 000
17	Շարժական ռ/կ ՊԱՌ-10 ռադիոփարոսի տարեկան տեխնիկական սպասարկում	50211100/17	1 144 000	1 144 000	1 144 000	1 716 000	1 716 000	1 716 000	1 716 000	1 716 000	1 716 000

18	Ռ/կ Բակլան-5 կիսամյակային տեխնիկական սպասարկում	50211100/18	360 000	360 000	360 000	932 000	932 000	932 000	720 000	720 000	720 000
19	Ռ/կ Պոլյոտ-1 տարեկան տեխնիկական սպասարկում	50211100/19	67 000	67 000	67 000	67 000	67 000	67 000	134 000	134 000	134 000
20	Ռ/կ Պոլյոտ-2 կիսամյակային տեխնիկական սպասարկում	50211100/20	936 000	936 000	936 000	936 000	936 000	936 000	1 872 000	1 872 000	1 872 000
21	Ռադիոընդունիչ Ռ-872 տարեկան տեխնիկական սպասարկում	50211100/21	129 000	129 000	129 000	172 000	172 000	172 000	215 000	215 000	215 000
22	Ռադիոպելենգատոր ԱՌՊ-7 կիսամյակային սպասարկում	50211100/22	524 000	524 000	524 000	524 000	524 000	524 000	1 048 000	1 048 000	1 048 000
23	Հրամանատարաշտաբային մեքենաների կիսամյակային տեխնիկան սպասարկում	50211100/23	1 240 000	1 240 000	1 240 000	2 480 000	2 480 000	2 480 000	2 480 000	2 480 000	2 480 000
24	Շարժական հրամանատարական կետի տարեկան տեխնիկական սպասարկում	50211100/24	485 000	485 000	485 000	485 000	485 000	485 000	485 000	485 000	485 000
25	ԱՊՊ-90 լուսատեխնիկական ապահովման համակարգի տարեկան տեխնիկական սպասարկում	50211100/25	580 000	580 000	580 000	870 000	870 000	870 000	870 000	870 000	870 000
26	Կարճալիք «Կաշտան» ռադիոկայանի տարեկան տեխնիկական սպասարկում	50211100/26	745 000	745 000	745 000	745 000	745 000	745 000	745 000	745 000	745 000
27	Հրամանատարադիսպետչերական կետի վահանակի ապամոնտաժում, միջին վերանորոգում, տեղադրում և կարգավորում	50211100/27								5 650 000	5 650 000
28	ՊԱՌ-10 քերման փարոսի վերանորոգում, Արցախի Հանրապետության Վաղոհաս գյուղում տեղադրում և կարգավորում	50211100/28				7 955 000	7 955 000	7 955 000	7 955 000	7 955 000	7 955 000
29	Պոլյոտ-2 ռ/կ միջին վերանորոգում, տեղադրում և կարգավորում	50211100/29				2 690 000	2 690 000	2 690 000	2 690 000	2 690 000	2 690 000
					ԸՆԴԱՄԵՆԸ					**79 396 000**	

Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

"ՌԱԴԱՐ-ԱՎԻԱ» ՓԲԸ
Տնօրեն

Գ. ՂԱՁԱՐՅԱՆ

Հավելված N 3
ՄԱԵՁԲ-23-2 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս _____ և Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
REPUBLIC OF ARMENIA

ՕԴԱՆԱՎԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏ
MAINTENANCE ORGANISATION APPROVAL CERTIFICATE

Հղում
Reference: **AM.145.0017**

Համաձայն Հայաստանի Հանրապետության "Ավիացիայի մասին" օրենքի և Եվրոպական Հանձնաժողովի (ԵՀ) թիվ 1321/2014 կանոնակարգի՝ քանի դեռ այն գործում է, ստորև նշված պայմանների համաձայն, Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը սույնով վավերացնում է՝

Pursuant to the Law on Aviation of the Republic of Armenia and to Commission Regulation (EC) No 1321/2014 for the time being in force and subject to the condition specified below, the General Department of Civil Aviation at the Government of the Republic of Armenia hereby certifies:

«ՌԱԴԱՐ-ԱՎԻԱ» ՓԲԸ
ՀՀ, 1104 Վաղարշապատ, Տեր-Գաբրիելյան 22
«RADAR-AVIA» CJSC
1104, Vagharshapat, Ter-Gabrielyan 22, RA

որպես թիվ 1321/2014 կանոնակարգի Հավելված 2-ի (ՓԱՐՏ-145) Ա մասին համապատասխան տեխնիկական սպասարկման կազմակերպություն, հաստատված կից ներկայացվող թույլատրված աշխատանքների ցանկում թվարկված արտադրանքները, մասերը և սարքերը սպասարկելու համար և՝ կիրառելով վերոհիշյալ հղումը շահագործման թույլատրության վկայականներ վավերացնելու համար և, եթե նախատեսվում է, կցված հավանության ժամանակացույցում թվարկված այդ օդանավերի համար նույն կանոնակարգի՝ Հավելված 1-ի (Part-M) Մ.901 (l) կետում նշված, թռիչքաթիռների շահագործման վերանայումից հետո առաջարկություններ և թռիչքաթիռների շահագործման վերանայման վկայագրեր:

as a maintenance organisation in compliance with Section A of Annex II (Part-145) of Regulation (EC) No 1321/2014, approved to maintain products, parts and appliances listed in the attached approval schedule and issue related certificates of release to service using the above references and, when stipulated, to issue recommendations and airworthiness review certificates after an airworthiness review as specified in point M.A.901(l) of Annex I (Part M) to the same Regulation for those aircraft listed in the attached approval schedule

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ/*CONDITIONS*:

1. Սույն վավերացումը սահմանափակված է, հաստատված տեխնիկական սպասարկման կազմակերպության ձեռնարկի աշխատանքների ցանկի բաժնում նշվածով՝ Հավելված 2-ի (ՓԱՐՏ-145) Ա մասի համաձայն, և

This approval is limited to that specified in the scope of work section of the approved maintenance organisation exposition as referred to in Section A of Annex II (Part-145), and

2. Սույն վավերացումը պահանջում է համապատասխանություն հաստատված տեխնիկական սպասարկման կազմակերպության ձեռնարկի ընթացակարգերին և

This approval requires compliance with the procedures specified in the approved maintenance organisation exposition, and

3. Սույն վավերացումը ուժի մեջ է քանի դեռ հաստատված տեխնիկական սպասարկման կազմակերպությունը համապատասխանում է թիվ 1321/2014 կանոնակարգի Հավելված 2-ի (ՓԱՐՏ-145) պահանջներին:

This approval is valid whilst the approved maintenance organisation remains in compliance with Annex II (Part 145) of Regulation (EC) No 1321/2014.

4. Վերը նշված պայմաններին համապատասխանելու դեպքում սույն սերտիֆիկատը ուժի մեջ է մինչև սահմանված թվականը, եթե այն նախօրոք չի հանձնվել, փոխարինվել, կասեցվել կամ դադարեցվել:

Subject to compliance with the foregoing conditions, this approval shall remain valid until the specified date unless the approval has previously been surrendered, superseded, suspended or revoked.

Տրման ամսաթիվը
Date of original issue: 15.08.2017

ՀՀ ԿԱ ՔԱԳՎ Թռիչքային Պիտանիության վարչության պետ
Director of Airworthiness Department of GDCA RA

Ուժի մեջ է մինչև
Date of expiry 15.08.2018

L.S. / SEAL

V. Sayadyan

Ստորագրություն/*Signature*

ՕԴԱՆԱՎԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿ
MAINTENANCE ORGANISATION APPROVAL SCHEDULE

Հղում **AM.145.0017**
Reference:

Կազմակերպություն՝ **«ՌԱԴԱՐ-ԱՎԻԱ» ՓԲԸ**
ՀՀ, 1104 Վաղարշապատ, Տեր-Գաբրիելյան 22
Organisation: **«RADAR-AVIA» CJSC**
1104, Vagharshapat, Ter-Gabrielyan 22, RA

Դասը **CLASS**	**Կարգը** **RATING**	**Սահմանափակում** **LIMITATION**
Բաղադրամասերի բացի համալրված շարժիչներից կամ օժանդակ շարժիչներից ***Components other than complete Engines or APU***	C3- Հաղորդակցում և նավիգացիա *Comms and Nav*	Համաձայն «Ռադար-Ավիա» ՓԲԸ SUՁ 1.9 բաժնի MOE Part 1.9

Սույն հաստատումը սահմանափակված է, հաստատված Տեխնիկական սպասարկման կազմակերպության ձեռնարկի թույլատրված աշխատանքների բաժնում ընդգրկված արտադրանքներով, մասերով, սարքերով և գործառույթներով:
This approval is limited to those products, parts and appliances and to the activities specified in the scope of work section of the approved maintenance organization exposition.

Հղում տեխնիկական սպասարկման կազմակերպության ձեռնարկին՝
Maintenance Organisation Exposition reference Doc. № РОТО «РАДАР-АВИА»

Առաջին հրատարակության ամսաթիվը՝
Date of original issue: 02.09.2015

Վերջին փոփոխության հաստատման ամսաթիվը՝
Date of last revision approved: 15.08.2017

Փոփոխության համարը՝
Revision No: 02

Տրման ամսաթիվը
Date of original issue: 15.08.2017

ՀՀ ՔԱԳՎ Թռիչքային Պիտանիության վարչության պետ
Director of Airworthiness Department of GDCA RA

Ուժի մեջ է մինչև
Date of expiry: 15.08.2018

Ստորագրություն/*Signature:*